ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՀՐԱՎԵՐԻ ՊԱՐԶԱԲԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի 2024 թվականի փետրվարի 7-ի թիվ 2 որոշմամբ և հրապարակվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն

ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԾԱԾԿԱԳԻՐԸ «ՇՄՆ-ԲՄ-ԾՁԲ-24/18»

Շրջակա միջավայրի նախարարության կարիքների համար «Անտառների պետական հաշվառման ծառայությունների» ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՇՄՆ-ԲՄ-ԾՁԲ-24/18» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերի վերաբերյալ 2024 թվականի փետրվարի 5-ին ժամը 18:22:50-ին ստացված հարցադրումը և դրանց վերաբերյալ 2024 թվականի փետրվարի 7-ին ժամը 16:30-ին տրամադրված պարզաբանումը՝

Հարցադրում N 1: Խնդրում ենք պարզաբանել «նախորդ և ներկա անտառկառավարման պլաններ» հասկացությունը՝ կոնկրետ «Իջևանի անտառտնտեսություն» մասնաճյուղի օրինակով: Վերջին կառավարման պլանը պատրաստվել է 2017 թվականին, իսկ նախորդը 2006 թվականին: Փաստորեն վերջին կառավարման պլանից անցել է մոտ 6 տարի:

Հարցադրում N 2: Տեխնիկական բնութագրի «Անտառների հաշվառման շրջանակը» ենթավերնագրի տակ գրված է՝ «Անտառների հաշվառման ենթակա տվյալները ներառում են նախորդ (դրանց բացակայության դեպքում հիմք են ընդունվում «Հայանտառ» ՊՈԱԿ-ում առկա նյութերը (փաստաթղթերը, ուսումնասիրության արդյունքները, եզրակացությունները, հաշվետվությունները և այլն)) և ներկա անտառակառավարման պլաններից տեղեկությունները, օգտագործելով նաև հաշվետվություններ, քարտեզներ, արբանյակային պատկերներ, կադաստրային տվյալներ և այլ նյութեր»:
Խնդրում ենք պարզաբանել, ինչպես հասկանալ ներկա անտառկառավարման պլանը: 2017 թվականինը պետք է ընդունել նախորդ և լրացուցիչ ուսումնասիրությունների արդյունքներով ներկայացնել արձանագրված փոփոխություններով համապատասխան տեղեկատվությունը 01.01.2024 թվականի դրությամբ որպես վերջի՞ն, թե՞ 2017 թվականը ընդունել վերջին և լրացուցիչ ուսումնասիրություններով փոփոխություններ կատարել և համադրել 2006 թվականին:

Անտառածածկ տարածքների կամ անտառային պաշարների ընթացիկ փոփոխությունները.

Անտառածածկ տարածք	Նախորդ անտառակառավարման պլանի համաձայն		Ներկա անտառակառավարման պլանի համաձայն		Փոփոխությունը		Փոփոխության մեկնաբանությունը
	Ընդամենը				Ընդամենը		Ընդամենը
	Մակերեսը հա	Պաշարը խ/մ	Մակերեսը հա	Պաշարը խ/մ	Պաշարը խ/մ	Մակերեսը (+ կամ -) հա	Պաշարը (+ կամ -) խ/մ
Ասեղնատերևավորներ							
Տերևավորներ							
Ընդամենը							

Հարցադրում N 3: Որպես օրինակ. «Հրազդանի անտառտնտեսություն» մասնաճյուղի կառավարման պլանը պատրաստվել է 2022 թվականին, նախորդը 1990 թվականին: Ենթադրվում է, որ 2022թ. կառավարման պլանը ընդունել վերջին՝ լրացուցիչ ուսումնասիրություններով փոփոխություններ կատարելով և համադրել 1990 թվականին:

Հարցադրում N 4: Այն մասնաճյուղերի անտառակառավարման պլանները, որոնք գտնվում են շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման փուլում, արդյո՞ք պետք է ընդունել վերջին, թե՞ վերջին ընդունվում է նախորդը: Այդ դեպքում «Հրազդանի Անտառտնտեսություն» և «Արագածոտնի անտառտնտեսություն» մասնաճյուղերի պարագայում կրկին առնչվում ենք նախորդ հարցին:

Հարցադրում N 5: ՄԱՍ 1-ի 1.1 ենթակետում նշվում է «Գնման առարկա է հանդիսանում Շրջակա միջավայրի նախարարության կարիքների համար՝ Անտառների պետական հաշվառման ծառայությունների ձեռքբերումը (այսուհետ՝ նաև ծառայություն), որը խմբավորված է 12 (տասներկու) չափաբաժիններում՝», սակայն հաջորդող աղյուսակում յուրաքանչյուր մասնաճյուղ ներկայացված է որպես առանձին չափաբաժին, այսինքն 17

(տասնյոթ) չափաբաժին: Անհասկանալի է որ մասնաճյուղերն են միասին մեկ չափաբաժին կազմում:

Հարցադրում N 6: Հրավերի Աղյուսակ 2-ի 28-րդ կետում նշված է «Թեմատիկ քարտեզների պատրաստում էլեկտրոնային (GIS համակարգով) և թղթային տարբերակով»: Անհրաժեշտ է հստակեցում. ինչպիսի՞ թեմատիկ քարտեզներ պետք է կազմվեն:

Հարցադրում N 7: Հրավերի Աղյուսակ 2-ի 29-րդ կետում նշված է «Անտառների և անտառային հողերի հաշվառման տվյալների մուտքագրում անտառների կառավարման տեղեկատվական համակարգ (FMIS): Արդյո՞ք տրվելու է «FMIS» համակարգին հասանելիություն, և եթե այո, ապա ի՞նչ կարգավիճակով:

Հարցադրում N 8: Քարտեզագրվում են իրական փոփոխությունները երկու անտառգույքագրման՝ նախորդ և վերջին ժամանակահատվածների միջև: Արդյո՞ք նախորդ անտառգույքագրման սխալները պետք է քարտեզագրել որպես փոփոխություն:

Պարզաբանում N 1-4: Ներկա անտառակառավարման պլանը ներկայումս գործող, ինչպես նաև արդեն իսկ մշակված և հաստատման փուլում գտնվող անտառակառավարման պլաններն են (աղյուսակներում նշված են աստղանիշով): Նախորդ անտառակառավարման պլանները, մինչ ներկա կամ նոր անտառակառավարման պլանները առկա, ուժը կորցրած կամ ժամկետանց պլաններն են:

Պարզաբանում N 5: Հրավերում տեղի է ունեցել տեխնիկական վրիպակ: armeps.am համակարգում չափաբաժինների քանակ՝ 17 է:

Պարզաբանում N 6: թեմատիկ քարտեզները նույնական անտառակառավարման պլաններում է ներառված քարտեզների հետ:

Պարզաբանում N 7: մուտքագրումները կատարվելու են պատվիրատուի «Հայանտառ» ՊՈԱԿ-ի համապատասխան ստորաբաժանումների հետ համատեղ:

Պարզաբանում N 8: 8-րդ կետի հարցադրումը բացակայում է առաջադրանքից:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել «ՇՄՆ-ԲՄ-ԾՁԲ-24/18» ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղար՝ **Լ.Զոհրաբյանին**:

Հեռախոս՝ (011) 818 529:

Էլեկտրանային փոստ՝ gnumner@env.am:

«ՇՄՆ-ԲՄ-ԾՁԲ-24/18» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողով